Вполне возможно также, что базальтовая плита хачкара способна выполнять не только мемориально-символические функции, но предназначена также и для практической аккумуляции космических энергий, оказывающих определенное воздействие на тонкие и плотные тела; а поля хачкаров на армянских кладбищах образуют мощные энергетические поля — связи с эгрегом<sup>8</sup>, подпитывающим таким образом своих членов как ушедших, так и живущих.

Вполне понятно при этом, что тысячи хачкаров, густой сетью покрывающих территорию Армении, способны

образовывать единое энергетическое поле, определенным образом влияющее на запас жизненной силы нации. Этот гигантский резонатор в идеальном случае очищает и высветляет общее энергетическое поле за счет молитв и медитаций святых, монахов, священнослужителей и всех верующих. При отсутствии таковых этот колоссальный энергетический резонатор может работать как накопитель «массовых» энергий (в числе которых могут оказаться энергии подавленности, насилия, гнева и т.п.). В таком случае массовое уничтожение памятников подобного рода (например, членами другого эгрегора) ведет не просто к утрате памятников материальной культуры, но и к уничтожению определенных запасов энергетики.

Появление мотивов мандалы и янтры на хачкаре можно связать с нахождением Армении на высокогорье, среди снеговых вершин (Масис, Арагац и др.), горная энергия которых, как можно полагать, инициировала медитационные практики монахов, в определенной степени сходные с соответствующими практиками духовного совершенствования йогов Индии и Тибета, — не случайно и на хачкаре, и в орнаментике армянских храмов достаточно часто встречается один из счастливых знаков буддизма («кишки Будды»).

При взгляде на хачкар невольно становится яснее универсальная природа мировой символики, истоки которой — структуры тонкого тела человека. Образы хачкара легко включаются в эту традицию обозначения энергетических структур тонкого тела. Так, чакра<sup>9</sup> может изображаться круговой цветочной розеткой. Вихревая розетка (или «сегнерово колесо») обозначает энергетический вихрь или воронку, с помощью которой аккумулируется энергия, необходимая для перехода из одного энергетического плана в другой. Вертикаль

древа, ставроса<sup>10</sup>, стелы, жезла (ср. с древнеегипетским дэдом или жезлом Гермеса Трисмегиста) символизирует сушумну — главный энергетический канал человека, совпадающий с позвоночником физического тела.

Любопытно, что древнейшие хачкары имеют овальную форму сплюснутого яйца. Именно такую форму кокона нагваля (т.е. мага, владеющего приемами управления тонкими энергиями своего организма) описывал Карлос Кастанеда в одной из своих книг, напрямую используя сравнение именно с надгробным камнем. Случайно ли это совпадение? Или это еще один из ключей к совершенствованию нашей собственной природы в виде «эталонной» формы тонкого тела человека? Хачкар по-прежнему содержит множество интригующих загадок, которые еще ждут своих исследователей.

Символический образ религиозного характера возникает в результате приписывания знакомых атрибутов непостижимому, не визуализируемому. Символика по самой своей сути — это упрощение в целях наглядности и понятности. Образы армянского символизма, частично рассмотренные выше, в большинстве своем содержат ясно ощущаемую отсылку к своему таинственному первообразу. И подобно тому, как архангел может зреть лик Господа лишь в зеркале, так и это невыразимое содержание видится нам лишь в отражении образов, запечатанных в камень. И все же в них сквозит нечто знакомое. Некая память, еще не до конца утраченная. Вспомнить — и вернуться к самому себе, практически использовав вновь открывшееся знание: не в этом ли последний смысл любого образа, который мнится нам чистым искусством, орнаментом или декоративным изыском?

*Алексей Орлов*  
*Журнал Pro Armenia*

1. Мандала (санскр.) — круг; диск; изображение буддийского космоса; мир как целое.

2. Инсигния (лат.) — атрибуты высшей власти.

3. Бодхисатва (санскр.) — букв. «высветляющий живущих», святой, приходящий на Землю, чтобы указать путь к спасению.

4. Гаутама — родовое имя царевича Сиддхарты, основоположника буддизма, до того, как он достиг просветления.

5. Сутры (санскр.) — священные тексты в брахманизме и буддизме, обычно — изречения Будды.

6. Янтра (санскр.) — специальное изображение, используемое для достижения высших состояний при медитации.

7. Исихия (греч.) — покой, безмолвие, отрешенность — один из путей единения с Богом через «очищение сердца» самососредоточением сознания христианина в исихазме (Византия, IV—VII вв.).

8. Эгрегор — поле энергий, создаваемых общей деятельностью, мыслями и эмоциями единомышленников, единоверцев (например, православных христиан).

9. Чакра (санскр.) — один из семи энергетических центров в «тонком» теле человека.

10. Ставрос (греч.) — столб, на котором распинали преступников в Древнем Риме.



# МНОГОНАЦИОНАЛЬНЫЙ КРЫМ В ФОТОГРАФИЯХ А. САНИКА



Об уникальности Крыма написано и сказано очень много. Его красоты вдохновляли не одно поколение художников, писателей и музыкантов. Величественные горы и нежный бархат морской глади не раз были воспеты поэтами разных времен. Но почти все они неизменно выпускали из виду главное богатство Крыма его народ.

Конечно, в нашей истории был печальный период идеологического давления и запретов по этой теме. Но сейчас жить в многонациональном Крыму и быть в стороне от его естественных культурных процессов невозможно. Так распорядилась судьба, объединив нас русских, украинцев, болгар, армян, татар, греков и мн. других на "благословенной земле Тавриды". Теперь от нас зависит её спокойствие и процветание.

Именно эту цель преследовала выставка "Этническая культура Крыма в фотографиях А. Саника", представленная 9-го декабря 2006 года в Крым-

ском этнографическом музее.

Анатолий Саник Салистый фотохудожник с большим стажем, член Союза художников АРК, авторов фотографий в таких газетах, как "Крымские известия", "Крымская светлица", "Голубь Масиса", "Тилтас", "Янгы дюнья". Его фотоработы представлены в изданиях: "Кто есть кто в Крыму", "Крым. Армяне. Десять веков соиздания", в сборнике песен К. Фролова, в альбомах крымских художников Н. Моргуна, Ф. Захарова и др. Он участник и организатор многих фотовыставок. Самые последние - "Международный день родного языка" и "Мы - Крымчане". Работы Саника в цикле выставок "Мы - Крымчане" были признаны лучшими. Они принесли ему победу в одноименном республиканском конкурсе этнических СМИ в номинации "Пресса".

Чтобы добиться таких успехов, не достаточно иметь одного желания. Необходим талант вкупе с трудолюбием. Еще в детстве он увлекся фотографированием. Первые работы им были сделаны в 10 лет на подаренной отцом "Лейке". К счастью, его интерес к фотоаппарату не пропал со временем, как бывает у многих подростков. Свой талант он развил и обогатил благодаря курсам фотокорреспондентов при издательстве "Днепр", затем часто печатался в газетах и журналах Днепропетровска.

Этого тихого и скром-

ного человека, неизменно с фотоаппаратом в руках, можно увидеть на многих культурных мероприятиях. Осторожно, плавной походкой, чтобы не потревожить и не спугнуть жизнь, он фиксирует увиденное во всех его проявлениях. Его камера делает нас свидетелями радости и грусти, добра и торжества справедливости. Фотографии мастера не просто застывшая жизнь, а память вечная и непреходящая.

Работы А. Саника можно назвать событийными. На выставке в музее он также представил событийные фотографии из культурной жизни народов Крыма. Экспозиция из пятидесяти фоторабот рассказывает о жизни национальных общин: караимской, ар-







мянской, русской, украинской, французской, литовской и мн. других. Нельзя без сочувствия смотреть на старую женщину, последнюю пред-

тографии рассказывают о праздниках, обычаях и традициях народов Крыма. Эти работы интересны не только с познавательной точки зрения. Глядя на

них, невольно проникаешься сочувствием и уважением к тому или иному народу. Ловишь себя на мысли, что в тебе крепнут лучшие человеческие качества. Значит, мастер добился своего растрожил душу посетителей.

Выставка "Этническая культура Крыма в фотогра-

ставительницу рода караимских Кагамов, на фотографии "Караимы. Память тысячелетий...". А работа "Сурб Хач. Входящие в храм" и "Кебир Джами. Возрождение" вызывают и грусть, и радость одновременно. Многие фо-

фиях А. Саника" не оставила равнодушной никого. Представители власти первый заместитель министра по культуре АРК А.Г. Литвиненко, первый заместитель председателя Республиканского комитета АРК по де-



лам межнациональных отношений Н. Юрковская и председатель Рескомитета АРК по охране культурного на-







следея Н.О. Гриненько - с восторгом высказывались об экспозиции. Ведь мероприятия такого рода сближают этносы больше, чем масса государственных указов и постановлений.

Несомненным признанием таланта автора являются и многочисленные высказывания коллег. "Благодарен за выставку! Во всех снимках чувствуется мастерство и душа художника. Творческих успехов в будущих уникальных кадрах жизни", - пожелал художник Ирфан Нафиев. А вот мнение фотокорреспондента В. Еременко: "Молодец! Работа с людьми и свой авторский взгляд это не каждому дано. Так держать!"

Да, не каждому дано тонко чувствовать душу народов, их мироощущение. Необходимо быть носителем нескольких культур, чтобы добиться этого. Анатолию Санику это удалось. И не последнюю роль здесь сыграли происхождение и интернациональная семья. Анатолий Саник, как никто другой, смог передать богатство и многообразие культуры народов Крыма.

*Рита Григорян*





# Եղիշե Չարենց -110

Մարտի 13-ին լրացավ հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի (Սողոմոնյան) ծննդյան 110-ամյակը: Այս տարի լրանում է նաև 70 տարին այն օրից, երբ տաղանդավոր և յուրօրինակ, հակասություններով ու հույսերով ամլեցուն, խորհրդային իշխանությունն ընդունած և նրան ծառայող, բայց երբեք իր ազգային նկարագիրը չկորցրած ստեղծագործ անհատը դարձավ այդ նույն ռեժիմի գոհը:



Դրիմահայոց ընկերությունն այդ տարելիցները նշեց գրական երեկոյով (այդ մասին կարդացեք էջ 34-ում):

Այս առիթով ձեզ ենք ներկայացնում Ե. Չարենցի երկու բանաստեղծությունները, որոնք հետագայում երգ են դարձել: Հարկ է նշել, որ նույնիսկ բանաստեղծի կենդանության օրոք նրա խոսքերով երգեր են գրվել: Հիշենք թեկուզ շատերին անհայտ այն փաստը, որ Պեպոյի երգի հեղինակները, Համո Բեկնազարյանի համանուն կինոնկարից, Երիտասարդ Արամ Խաչատրյանն ու Եղիշե Չարենցն են:

## ՄՈՐՍ ՀԱՄԱՐ ԳԱՋԵԼ

*Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին,  
Լույս խորշումներ ու գծեր, մայր իմ անուշ ու անգին:*

*Ահա նստած ես տան դեմ, ու կանաչած թթենին  
Դեմքիդ ստվեր է գցել, մայր իմ անուշ ու անգին:*

*Նստել ես լուռ ու տխուր, հին օրերն ես հիշում այն,  
Որ եկել են ու անցել, մայր իմ անուշ ու անգին:*

*Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,-  
Ո՞ր է արդյոք հեռացել, մայր իմ անուշ ու անգին:*

*Ո՞ր է արդյոք հիմա նա, ո՞րք է արդյոք, թե մեռած,  
Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին:*

*Եվ երբ հոգնած է եղել, և երբ խաբվել է սիրուց -  
Ո՞մ գրկում է հեծեծել, մայր իմ անուշ ու անգին:*

*Մտորում ես դու տխուր, և օրրում է թթենին  
Տխրությունը քո անծիր, մայր իմ անուշ ու անգին:*

*Եվ արցունքներ դառնադի ահա ընկնում են մեկ-մեկ  
Քո ձեռքերի վրա ծեր, մայր իմ անուշ ու անգին...  
1920 թ.*

## ՀԵՌԱՅՈՒՄԻ ԽՈՍՔԵՐ

*Իմ աչքերի մեջ այնքա՞ն կրակներ եմ մարել ես  
Եվ հոգուս մեջ, հուսահատ, այնքա՞ն աստղեր եմ մարել:  
Կյանքս, որ հուշ է դարձել, հեռանալիս չանիծես.  
Կյանքս կանցնի, կմարի - բայց երգս կա, կապրի դեռ:*

*Կյանքս կանցնի, կմարի, որպես կրակ ճահիճում՝  
Աննպատակ ու տարտամ, անմխիթար ու անհույս:  
Երգերիս մեջ - դու գիտե՞ս - ինձ ոչ ոք չի ճանաչում  
Կարծես ուրի՞շն է երգում կապույտ կարոտը հոգուս:*

*Հավիտյան գոց ու անխոս՝ թափառել եմ ու լռել.  
Ոչ ոք, ոչ ոք չգիտե՞՞ արդյոք ի՞նչ է կյանքս, ես.  
Միայն գիտեն, որ կյանքում ինչ-որ երգեր եմ գրել,  
Ինչպես գիտեմ, որ դու կաս, որ սիրում է մեկը քեզ:*

*Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր.  
Քո աչքերի, քո դեմքի տխրությունը սրբազան.  
Կյանքս թողած անհունում - ես երգել եմ սերը խոր  
Ու կարոտը թանրիս, որ երբե՞ք քեզ չհասան...*

*Մոտենում է, քո՛ւյր իմ, ա՛խ, իրիկունս միգամած.  
Ես ի՞նչ անեմ, որ հոգիս չհեծկլտա կարոտից.  
Ինչպե՞ս, ինչպե՞ս ընդունեն կյանքիս բաժակը քամած,  
Որ ձեռքերս չդողան, որ օրերս ներեն ինձ:*

*Գուցե՞ հանկարծ կասկածեմ, չհավատամ ինքս, ես.  
Ու սուտ թվա իմ հոգուն քո կարոտը սրբազան...  
- Ինչ էլ լինի, քո՛ւյր իմ, քո՛ւյր, հեռանալիս չանիծես  
Խեղճ կարոտը թանրիս, որ երբե՞ք քեզ չհասան...  
1917 թ.*





# Գրական երեկոներ Ղրիմահայոց ընկերությունում



Փետրվարի 18-ին աշխուժություն էր տիրում Ղրիմահայոց ընկերությունում. հավաքվել էր Ղրիմահայ գրողների ամբողջ կազմը, լրագրողներ, քննադատներ՝ անցկացնելու իրենց կազմակերպության հերթական նիստը և տոնելու Հովհ. Թումանյանի ծննդյան 138-ամյակը:

Նիստի օրակարգում կարևոր հարցեր էին դրված՝ կատարված աշխատանքների հաշվետվություն, պատասխանատու քարտուղարի ընտրություն, կազմակերպության անվանադիրություն, նոր անդամների ներգրավում և վկայականների հանձնում, տպագրությունից առաջ նոր ավանսախի քննարկում, նոր կանոնադրության ընդունում և այլ հարցեր:

Նիստը իր բարի խոսքով և ցանկություններով բացեց Ղրիմահայ գրողների միության նախագահի տեղակալ Մարատ Ֆայզին:

2004-2007 թ.թ. կատարված աշխատանքների մասին հաշվետվությամբ հանդես եկավ կազմակերպության նախագահի պաշտոնակատար Սասուն Էտիբարյանը: Հաշվետվության հետ

միասին քննարկվեցին հայ գրողների միության աշխատանքների բարելավման, Ղրիմի մյուս ազգային ստեղծագործական կազմակերպությունների և սփյուռքահայ գրողների հետ կապերի հաստատման հարցեր: Ղրիմահայ գրողների միության անդամներն իրենց ելույթներում բազմաթիվ առաջարկություններ արեցին, որոնք ընդունվեցին միաձայն:

Նիստի որոշմամբ՝ Սասուն Էտիբարյանն ընտրվեց Ղրիմահայ գրողների միության պատասխանատու քարտուղար: Կազմակերպության նոր կանոնադրության մշակման գործն ստանձնեց Անատոլի Միրզոյանը:

\*\*\*

Նիստից անմիջապես հետո գրողները, մեծաքանակ արվեստասերների հետ միասին նշեցին հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի ծննդյան տարելիցը: Թումանյանի կյանքի և գործունեության մասին դասախոսություն կարդաց Վահան Վերմիշյանը, մեծ բանաստեղծի մասին ժամանակակիցների հիշողություններից պատմեց Սերգեյ Ամիրջանյանը: Ելույթ ունեցան Ջուլիետա Կարապետյանը, Լիլիթ Թաշչյանը: Ներկաներին հաճելի անակնկալ մատուցեցին հայկական ոչ ավանդական դպրոցի սաները, որոնք արտասանեցին Թումանյանի բանաստեղծությունները, կատարեցին մեծ վարպետի խոսքերով գրված երգերից, մասնակցեցին վիկտորինային՝ ցուցադրելով Թումանյանի հեքիաթների իրենց իմացությունը:





Թեոդոսիացի պատմաբան և գրող Երվանդ Բարաշյանը լրացրեց այդ օրվա առանց այդ էլ հաճելի տպավորությունները. նա Հայկական ոչ ավանդական դպրոցին ընծայեց Հովհաննես Թումանյանի երկերի անցյալ դարասկզբի մի արժեքավոր հրատարակություն: Նվերը շնորհակալությամբ ընդունեց դպրոցի տնօրեն Թամարա Սալիստայա-Գրիգորյանը: Այսուհետ այդ թանգարանային նմուշի արժեք ունեցող գիրքն իր մշտական տեղը կգտնի դպրոցի գրադարանում: Իրենց ելույթներում երեկոյի մասնակիցներն շնորհակալական խոսք ուղղեցին միջոցառման կազմակերպիչներին, իսկ վերջում բոլոր ներկաները մեծ ոգևորությամբ երգեցին ավանդական «Ամպի տակիցը»:

\*\*\*

Նման մի գեղեցիկ միջոցառում էլ անցկացվեց մարտի 30-ին. այս անգամ գրական ցերեկույթը նվիրված էր Եղիշե Չարենցին, որի ծննդյան 110 և մահվան 70-ամյակը լրացավ այս տարի:



Կամերային միջավայրում անցած այդ գողտրիկ միջոցառման մասնակիցները մեծ հաճույք ստացան Չարենցի կյանքի հետաքրքիր դեպքերի մասին պատմություններից, նրա խոսքերով գրված երգերից, որոնց մի մասը, Մարիա Նալդանյանի ու Վահան Վերմիշյանի կատարմամբ, ներկաները լսում էին առաջին անգամ:

Ղրիմահայ գրողների նախաձեռնությամբ կազմակերպվող գրական-երաժշտական միջոցառումների շարքը որոշված է



շարունակել. հաջորդը Պարույր Սևակին նվիրված ցերեկույթն է:

*Ղրիմահայ գրողների միությունը շնորհակալություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր մեծ օգնություն են ցուցաբերում հայոց լեզվի ու գրականության պահպանման բարերար գործին, և առավել շնորհակալ կլինենք, եթե ավելի շատ ցանկացողներ լինեն՝ աջակցելու մեր ծրագրերի իրականացմանը, տպագրվող գրքերի քանակն ավելացնելուն, երիտասարդության մեջ հայ մշակույթի ու գրականության նկատմամբ սեր արթնացնելու ազգանվեր գործին:*

**Սասուն Ետիբարյան**

Ղրիմահայ գրողների միության պատասխանատու քարտուղար Լուսանկարները **Ա. Սանիկի**





# Ցավդ տանեմ, Մորոզո՛ւ՛...

*Այս կես-կատակ ձևով շարադրված, բայց շատ լուրջ ու ցավոտ հարցի վերաբերող հոդվածը հեղինակը՝ ղրիմահայ տաղանդաշատ բանաստեղծ և երգիծաբան Սերգեյ Ամիրջանյանը, գրել է դեռևս 1990-ականների սկզբին և լրացրել ներկայիս կյանքի դրվագներով: Բայցևայնպես, քանի դեռ մեր միջավայրում որոշ հայեր շարունակում են իրենց երեխաներին կոչել թեկուզ և պապ ու տատից ժառանգած, բայց հայ մտքին ու ականջին խորթ ու անհարիր տարօրինակ անուններով, այս նյութը չի կորցնի իր հրատապությունը:*

Միջին և ավագ սերնդի ընթերցողները հավանաբար հիշում են հիսնական թվականներին այնքան մեծ ժողովրդայնություն վայելող Յովհանես Ծիրագի «Մեր մարդկանց անունները» բանաստեղծությանը, որտեղ հեղինակը իրեն հատուկ սրամտությամբ ծաղր ու ծանակի էր ենթարկում հայ ժողովրդի արատավոր սովորությունը, տարօրինակ անուն ունեցող որդին հանդիմանում է հորը. «Ի՛նչ Շևրոլետ, ավտո հո չե՞մ, լավ է քեզ էլ վիլիս կանչեմ»:

Այս բանաստեղծության լույս աշխարհ գալուց հետո, պարզվեց, որ շատ հայեր իրենց սիրասուն զավակներին անվանում են ոչ միայն Պուշկին ու Շեքսպիր, Պլատոն ու Ֆիրդուսի, այլև Գալանտերեա, Դիզիստերիա, մինչև անգամ Կոնստիտուցիա և այլն:

Այս բանաստեղծությունից երկու տասնամյակ հետո հայտնի գրող ու ֆելիետոնիստ Սուրեն Վահունին հանդես եկավ «Սովետական Հայաստան» թերթում «Ծիծաղելը քիչ է» հոդվածով, որտեղ հեղինակը կտրականապես պահանջում էր օրենքի ուժով փոխել այդ «անունները», իսկ մինչև փոխելը, որպես անվայելուց բառեր, գրել միայն սկզբնատառերով:

Ես նպատակ չունեմ ո՛չ ծաղրելու և ո՛չ էլ որևէ բան պահանջելու, ես պարզապես ուզում եմ գտնել տասնամյակներ շարունակ ինձ

տանջող հարցի պատասխանը՝ «ինչո՞ւ ե՛նք մենք այսպիսին»: Նախապես ասեմ, որ ես գույները չեմ խտացրել, որովհետև նրանք առանց այդ էլ շատ են խիտ: Այս հոդվածում ոչ մի անուն ու դեպք հորինովի չեմ, ես գրել եմ այն, ինչ տեսել ու լսել եմ իմ աչքերով ու ականջներով տասնամյակների ընթացքում:

Իջևանի անասնահումքի մթերման գրասենյակի պահեստում Շմավոն անունով մի մարդ էր աշխատում: Մեծ Հայրենականի մասնակից էր, հաշմանդամ, սիրում էր կոնծել և ամեն անգամ բաժակը դատարկելուց հետո սրբում էր թոջված երկար բեղերն ու աղոթքի նման կրկնում. «Ցավդ տանեմ Մորոզով»: Սկզբում կարծում էի, թե դա ինչ-որ թևավոր խոսք է, սակայն տեսնելով, որ շատ է կրկնում, մի անգամ հարցրի, թե ով է այդ Մորոզովը, որ այդքան շատ է ուզում ցավը տանել:

- Ի՛, նրա ցավը տանեմ, տղես ա, ով ա, բանակումն ա, երկու ամիս հետո գալու ա,- հերթական բաժակը վերցնելով՝ հպարտ-հպարտ պատասխանեց Շմավոնը:

- Ինչպե՞ս,- զարմացած ու զայրացած հարցրի,- նախ՝ Մորոզովը ազգանուն է և ոչ թե անուն, և հետո՝ ի՛նչ կապ ունի քո և քո տղայի հետ:

- Էհ՛,- հոգոց հանեց Շմավոնը,- բա որ կապ չունենար տղայիս անունը Մորոզով կոչեմ: Բանակում մի

ընկեր ունեի՝ անունը Մորոզով, իրար հետ որոշեցինք, որ եթե ողջ-առողջ տուն հասնեք, ես իմ տղայի անունը Մորոզով կոչեմ, նա՛ Շմավոն: Ես իմ խոստումը կատարեցի, բայց նա «նամարդություն» արեց, գրեց, որ ուզեցել է Շմավոն դնել՝ կինը չի համաձայնել: Դե՛, նրանց էլ գիտես էլի, կինը որ սաաց մածունը սև է, պետք է ասել սև է,- իր պատմությունն ավարտեց, Շմավոնը:

Ու ես լուռ մտածում էի, որ վատ չէր լինի, որ մենք էլ մի քիչ «նամարդություն» ունենայինք:

Ջերմուկ առողջարանային քաղաքի ըմպելասրահի մոտ երիտասարդ մի կին անընդհատ սաստում էր հեռվում խաղացող իր 10-11-ամյա տղային.

- Տորդա՛, խելո՛ք մնա, Տորդա՛, մի՛ արա և այլն.

- Որտեղի՞ց եք ճարել այդ անունը, հարցրի կապուտաչյա տիկնոջը:

- Վա՛յ,- զարմացավ նա, - չե՞ք տեսել...

- Տեսել եմ,- չթողնելով որ խոսքն ավարտի՝ ասացի,- տեսել ու լավ էլ հիշում եմ հետախույզ Տորդային (խոսքը հունգարական «Լույսը վարագույրի ետևում» ֆիլմի մասին է), բայց Տորդան ո՛վ, դու՞ք ո՛վ, դուք հայ եք, հո հունգարացի չե՞ք:

- Էհ, եղբայ՛ր ջան, մի՛ խոսեցրու,- հոգոց հանեց կինը, դա երկար պատմություն է: Տղաս երբ ծնվեց, անունը դրինք Աշոտ, չորս տարեկան էր, երբ ցուցադրվեց էդ անտեր ֆիլմը: Ամուսինս ֆիլմը վերջանալուց հետո երկու ոտը մի մաշիկի մեջ դրեց, թե տղայիս անունը պետք է փոխեմ՝ Տորդա դնեմ: Ինչ արինք-չարինք հնար չեղավ: Ինքն էլ շոջանում անունով տղա է, ամբողջ շոջանը ոտի կանգ-նեցրեց, ահագին ծախս արեց,





մինչև որ իրեն ասածն արեց: Յետո բոլորիս սպառնաց, որ ոչ մեկը այլևս տղայիս Աշոտ չասի,- «Կսպանեմ,- ասաց,- ով Աշոտ ասի», դե նրա ասածը ով կարող է չանել, ստիպված բոլորս սկսեցինք Տորդա ասել, - իր պատմությունն ավարտեց Տորդայի մայրիկը:

Ես գիտեմ այդպիսի «անունով» տղաների, որոնց համար երեխան ու ավտոմեքենան մեկ են՝ անպայման արտասահմանյան մակնիշի պետք է լինեն: Իհարկե Տորդան էլ «անունով» տղա է դառնալու, Տորդայի տղան էլ: Նա էլ իրեն տղային է Տորդա կնքելու, որպեսզի անմահացնի պապի հիշատակը և այսպես սերնդեսերունդ շարունակելու է տորդաների շարանը Յայոց աշխարհում:

Մի օր Իջևանում հանդիպեցի Նապոլեոն անունով վաղեմի ծանոթիս: Դեռ հեռվից նկատեցի, որ այդ մարդու հետ ինչ-որ բան է կատարվել. գալիս էր ինքն իրեն հետ վիճելով ու կոպտելով:

- Ի՞նչ է պատահել, աչքիս մի տեսակ ես երևում, - հարցրի:

- Մի՛ խոսեցրու, սրտիցս արյուն է կաթում: Սպարտակիս տղա է ծնվել, ուշացա,- կցկտուր սկսեց խոսել նա:

- Ինչպե՞ս, - զարմացա ես, - Սպարտակիդ տղա է ծնվել, դրա համար՞ր է սրտիցդ արյուն կաթում:

- Չէ՛, է՛, - անունի համար, - խոսքս կտրեց Նապոլեոնը: «Երևի ցանկացել է հոր անունը դնել, տղան չի համաձայնել, - մտածեցի ես»:

- Իսկ ին՞չ անուն են դել, - հարցրի:

- Արմեն, դժգոհեց Նապոլեոնը, - բայց ես ուրիշ անուն էի որոշել, ես որոշել էի Չապան դնել:

Արյունը սառավ երակներիս մեջ, կանգնեցի ուղղակի ապշահար. «Տե՛ր Աստված, այս մարդը խելագարվե՞լ է, ի՞նչ է: Սա ո՛չ երեսնական և ո՛չ էլ քառասնական թվականներն են, սա ութսունականների վերջին տարիներն են, և այս մարդն իր թոռնիկին ուզում է քաղաքացիական պատերազմի այդ խեղկատակի «անունո՞վ» կնքել»: (Ի դեպ Յայաստանում ես մի քանի ծանոթ Չապան (Չապո) ունեմ): Անհասկանալի է, Տիգրան, Վարդան, Մուշեղ, Աշոտ, Գարեգին, Անդրանիկ, Գևորգ, Սերոբ, Յայկ

ունեցող հայը (թեկուզ և Նապոլեոն անունով) ինչու է ուզում իր թոռնիկին Չապան կոչել: Ինչո՞ւ ենք մենք այսպիսին:

- Ոչի՞նչ, որ այդքան սրտանց ցանկանում ես, հաջորդի անունը կդնես Չապան, - մի կերպ փորձելով զսպել զայրույթս՝ ասացի ես:

- Ե՛հ, ես ի՞նչ իմանամ՝ հաջորդը տղա է, բա որ աղջիկ եղավ, հիասթափված տրտնջաց Նապոլեոնը:

- Ոչի՞նչ,- չարախնդացի ես,- թե որ աղջիկ եղավ, Կրուպսկայա կդնես:

- Ե՛հ, իմ սրտին, քո հավեսին,- ձեռքը թափ տալով հեռացավ «անբախտ» պապիկը:

Մի երկու տարի հետո ես նորից հանդիպեցի Նապոլեոնին, այս անգամ ծննդատան մոտ: Տղայի հետ եկել էին հարսին տուն տանելու. աղջիկ էր ունեցել: Ինձ տեսնելով՝ մեքենայից մի շիշ հոնի օդի հանեց, բաժակը լցրեց և մոտեցավ.

- Վերցրո՞ւ,- ասաց,- հարսս աղջիկ է ունեցել:

- Անունը ի՞նչ եք դրել,- անմիջապես հարցրի ես:

- Ուզում էի Կրուպսկայա դնել՝ չհամաձայնեց,- ծիծաղելով տղային ցույց տվեց Նապոլեոնը:

Իջևանի ՉԱԳՍ-ի վարիչի առանձնասենյակի առջև շփոթված ետ ու առաջ էր քայլում ծանոթ մի աղջիկ:

- Ի՞նչ է պատահել,- մոտենալով հարցրի նրան:

- Քույրս աղջիկ է ունեցել, այսօր պետք է դուրս գրեն: Վարիչը ծննդյան վկայականը չի տալիս. ասում է՝ ձեր ուզած անունը հայկական չէ:

Սառը քրտինք անցավ մարմնովս. «Դարձյալ այս չարաբաստիկ անունը», հետաքրքիր է՝ սրա՞նք ինչ անուն են ճարել:

- Իսկ ի՞նչ անուն եք ուզում,- փոքր ընդմիջումից հետո հարցրի ես:

- Մոնիկա,- երջանկությունից փայլատակող աչքերով պատասխանեց գրուցակիցս:

(Այդ օրերին ինչ-որ ֆրանսիական ֆիլմ էր ցուցադրվել, որտեղ գլխավոր դերում նկարահանվել էր Մոնիկա Վիտտին, դե հո չէ՞ր կարելի մոռացության մատնել այդպիսի մի կարևոր իրադարձություն):

- Իսկ ինչո՞ւ Մոնիկա, ասացի,- միթե հայկական քիչ անուններ

կան՝ Արմինե, Անահիտ, Գոհար, Յասմին, Ռուզան, Աշխեն, Փառանձեմ...

- Ի՞նչ,- զարմանքից քիչ մնաց ակնախորշերից դուրս թռչեին գրուցակցիս աչքերը,- Աշխեն, Փառանձեմ, ձե՞ռ ես առնում, ի՞նչ է, դու մոռանում ես, թե նա ում թոռն է, և հետո, հիմա ո՞վ է այդպիսի նավթալիկոտ անուններ դնում: Որպեսզի չվիրավորեմ նորաթուխ Մոնիկայի տգետ մորաքոջը. լուռ հեռացա:

Իսկ քիչ հետո, երբ ես կանգնած էի շրջանային մշակույթի պալատի առջև, տեսա, թե ինչպես է նա երջանկությունից սավառնում դեպի ծննդատուն՝ Մոնիկայի ծննդյան վկայականը ձեռքին: Յետագայում իմացա, որ գործկոմի նախագահն էր միջամտել:

Ու ես ակամա սկսեցի միտք անել՝ եթե Նապոլեոնին հաջողվեր թոռան «անունը» Չապան դնել, տարիներ հետո Չապանն ու Մոնիկան, երջանիկ պատահականությամբ ամուսնանային, թոռ ու ծոռի տեր դառնային, օրերից մի օր Չապանը կանչեր պատշգամբից.

- Աղջի Մոնիկա՛, կովը կթեցի՞ր:

- Չէ, Չապա՛ն ջան, Մոնիկին ու Չապոյին լողացնեմ, հետո կկթեմ,- պատասխանեց Մոնիկա տատիկը:

- Այսպիսի օրինակներ էլի կարող եմ բերել, սակայն բավարարվե՞ք այսքանով:

Քառասնական թվականների վերջին հայ բեմի մեծ երախտավոր Ամո Խարազյանի շրջիկ թատերախումբը Յայաստանի գյուղերում ու քաղաքներում հանդես էր գալիս արևելքի ամենասիրված սիրերգություններից մեկի՝ «Լեյլի Մեջնուն»-ի բեմադրությամբ: Դրանից հետո հայ ազգը համալրվեց անթիվ-անհամար Լեյլիներով: Յիսնականներին Եկրան բարձրացավ վրացական «Ֆաթիմա» ֆիլմը՝ Յայաստանը լցվեց ֆաթիմաներով ու ջամբուլատներով: Մահացավ Ֆրունզեն՝ ծնվեցին հայազգի հազարավոր ֆրունզիկներ, Ձերժինսկին՝ ֆելիքսներ, սպանվեց Կիրովը՝ կիրովներ, սկսվեց պատերազմը՝ ֆրոնտիկներ, վերջացավ պատերազմը՝ պոբեդաներ, սկսվեց ԲԱՄ-ի շինարարությունը՝ բամինաներ և այլն, և այլն...





Իսկ համլետների ու օֆելիաների (օֆիկների), համար էլ իհարկե «երախտապարտ» պետք է լինենք Շեքսպիրին: Ես համոզված եմ, որ այսօր Հայաստանում ավելի շատ համլետներ ու օֆելիաներ կան, քան թե Շեքսպիրի ու Դանեմարքայի արքայազնի հայրենիքում միասին վերցրած:

Իմ հայրենի Այգեհովիտ գյուղում տարիներ առաջ մի քանի տասնյակ մուշեղներ կային. ռանչպար, չարքաշ մարդիկ էին, որոնցից մեկն այսօր կենդանի է: Նրանցից յուրաքանչյուրը բազմաթիվ հետևորդներ՝ թոռ ու ծոռ ունի, սակայն նրանցից ոչ մեկը չի կրում իրենց պապիկի՝ հայ ժողովրդի այդ ամենափառահեռ ու ամենասիրված անուններից մեկը: Ամաչում են, ամաչում են իրենց զավակներին Մուշեղ կնքել: Իսկ իվանների, նիկոլների ու վասիլների թռնիկները շարունակում են անմահացնել իրենց պապիկների հիշատակը: Ցավալի է, բայց փաստ...

Երբ 1963 թվականին Տիգրան Պետրոսյանը դարձավ շախմատի աշխարհի չեմպիոն, մեզնից պակաս ուրախ չէին վրացիները, հատկապես թիֆլիսցիները. քեֆ էին անում, իրար շնորհավորում, հայերին շնորհավորում, ուրախ էին, որ իրենց նախկին համաքաղաքացին դարձել է աշխարհի չեմպիոն: Ուրախացան և վերջ. ոչ մեկի մտքով չանցավ իրենց նորածնին Տիգրան կոչել:

Հայաստանում քանի-քանի ռուսական գյուղեր կան, որոնց բնակիչները հարյուրամյակներ շարունակ ապրել ու ապրում են մեզ հետ կողք-կողքի: Աստված իրենց հետ, թող ապրեն, միևնույն է, եթե սրանից հետո մի քանի հարյուրամյակներ էլ ապրեն, ոչ մի ռուս ո՛չ մինչև օրս, ո՛չ էլ սրանից հետո իր երեխային հայի անուն ո՛չ դրել է, ո՛չ էլ կոչի: Եվ ճիշտ էլ կանի, նրանք հո մեզ նման հիմար չեն:

Իմ երկարամյա որոնումների ընթացքում միայն երկու ադրբեջանցի եմ տեսել Հայկազ և Շահեն անուններով: Վերջինս ինձ պատմեց, որ իրենցից առաջ ծնված իր բազմաթիվ քույրերն ու եղբայրները մահացել են, և մոլլան խորհուրդ է

տվել նորածնին հայի անուն տալ. այդպես էլ արել են, և Հայկազը ողջ է մնացել: Մոլլան ասել է, որ ալլահը ում շատ է սիրում, նրան էլ տանում է. ըստ երևույթին Հայկազին չի սիրել: Դրանից հետո հայկական անունով այլազգի մարդ մինչև օրս չեմ տեսել:

Իսկ հայազգի դարիկներ, շալիկներ, վալիկներ, ասկյարներ, բաքիրներ և այլն, ինչքան ուզեք: Մենք չէինք խորշում անգամ մեր զավակներին Համիդ անվանել, գուցե հայ թալեաթներ ու էնվերներ էլ կան, ո՞վ գիտե: Դատելով մեր որոշ անուններից՝ կարելի է որոշել մարդու տարիքը, իսկ իմանալով անունը և տարիքը, կարելի է որոշել թե ինչ կարևոր իրադարձություն է տեղի ունեցել աշխարհում այդ թվականին:

Աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների կենդանի տարեգրությունն ենք դարձել:

Իմ հայրենի գյուղում երեք եղբայրներ կային և հիմա էլ հավանաբար կան, մեկի անունը Վլասիկ էր, մյուսինը Ֆրոնտիկ, երրորդինը՝ Պոբեդա: Իհարկե ոչ ոք պատասխանատու չէ իր անվան համար, դրա պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է ծնողների ու զագսի տգետ աշխատակիցների վրա, բայց մարդը, խելահաս դառնալով, հո կարող է փոխել այդ այսպես կոչված «անունը»: Իմ ծանոթ բազմաթիվ ֆրոնտիկներից միայն երկուսը իրենց մեջ քաջություն գտան փոխելու անունները, մեկը դարձավ Մուշեղ, մյուսը՝ Արմեն: Հարգանք ու պատիվ նրանց:

Հայաստանում բավականին հայտնի մի անձնավորություն, որը երկար տարիներ կոմկուսի Միսիանի շրջկոմի առաջին քարտուղարն էր, իսկ հետագայում՝ 80-ականներին, «Սովետական Հայաստան» թերթի գլխավոր խմբագիրը, կրում էր Շչորս «անունը»: Զետաքցըրցի է՝ մի՞թե երբևէ նրա մտքով, կամ Հայաստանի այն ժամանակի ղեկավարների մտքով չի անցել ստիպել այդ մարդուն հրաժարվել այդ խայտառակությունից:

Այդ նույն տարիներին Հայաստանի գլխավոր դատախազի օգ-

նական էր աշխատում Պուշկին անունով մի երիտասարդ՝ Պուշկին Սերոբյան: Պատկերացրեք, որ այդ մարդը գնացել է Մոսկվա և ներկայացել է պետության գլխավոր դատախազին կամ նրա տեղակալներից որևէ մեկին՝ Պուշկին Սերոբյան: Ի՛նչ կմտածեն ոչ միայն այդ մարդու, այլև մեր ազգի մասին: Դա ոչ միայն նրա խայտառակությունն է, այլ մեր ամբողջ ազգի, դա համազգային խայտառակություն է և դրա դեմ համաժողովրդական պայքար պետք է մղել:

Սիմֆերոպոլի Սուրբ Հակոբ եկեղեցու նախկին քահանա Տեր Մկրտչին, որը ապրել է Շվեդիայում, մի անգամ հարցրի, թե հանդիպե՞լ է նա Եվրոպայում համլետների: «Իհարկե, պատասխանեց Տեր Մկրտչիչը. և բոլորն էլ հայեր էին»: Երբ մի անգամ գարմացած ու ավելի շատ զայրացած խոսում էի այն մասին, թե ինչու Խորհրդային Միության տարածքում այլազգի համլետներ ու օֆելիաներ չկան, գրուցակիցներիցս մեկը ասաց. «Որովհետև բոլորն էլ համոզված են, որ դրանք հայկական անուններ են»:

Ուղիղ երկու տասնամյակ ապրում եմ Ղրիմում, այս տարիների ընթացքում հանդիպել եմ վեց ռոզաների, և վեցն էլ՝ հայուհիներ:

Այսպես կարող եմ անվերջ շարունակել, սակայն ուզում եմ կանգ առնել ու նույն հարցը տալ, ինչո՞ւ ենք մենք այսպիսին: Մենք հո նոր ձևավորվող ազգ չենք, թող սնապարծություն չհամարվի, մենք աշխարհի ամենահնագույն ազգերից մեկն ենք, մենք երկու հազար տարվա թատրոն ունեցող ազգ ենք, մենք Գառնի ու Գեղարդ ունեցող ազգ ենք, մենք Մաշտոց ու Նարեկացի ունեցող ազգ ենք: Լինելով այդպիսի ազգի ներկայացուցիչ՝ ինչպե՞ս ենք ամաչում մեր երեխաների Գալանտերեա ու Դիզինտերիա, Չապան ու Կատովսկի անվանել:

*Սերգեյ Ամիրջանյան  
Ղրիմի հայ գրողների  
միության անդամ*



## «ЛУЙС» в конце тоннеля

Я думаю, что все члены Крымского армянского общества (КАО), да и другие крымчане знают, что общественная организация, какой является КАО, существует за счет таких средств, как членские взносы, благотворительная помощь и пожертвования. Но надо заметить, что за последнее время тенденция развития КАО стала такой, что данных средств стало не хватать для поддержания нормального функционирования общества, и вдобавок появилось еще очень много программ и мероприятий, которые необходимо проводить.

Год назад было принято решение создать благотворительный фонд для поддержки КАО и Армянской апостольской церкви в г. Симферополе, а также программ и мероприятий, связанных с поддержанием и развитием национальной идентичности крымских армян. В состав учредителей Фонда вошли 19 человек:

*Абгарян Вазген Фирдусович*  
*Акопджанян Вильи Беникович*  
*Акопян Овсеп Акопович*  
*Акопян Самвел Арамович*  
*Алексанян Дорик Александрович*  
*Аматуни Александр Ашотович*  
*Амирханян Сурен Георгиевич*  
*Арутюнян Гайк Абрамович*  
*Барсегян Георгий Ашотович*  
*Габриелян Олег Аршавирович*  
*Гудманов Владик Александрович*  
*Колиев Михаил Ованесович*  
*Манукян Вилик Рафикович*  
*Саргисян Самвел Карлипович*  
*Саргсян Вардан Вагаршакович*  
*Ханян Сергей Хачикович*  
*Хачатурян Мушег Михайлович*  
*Чорохян Гамлет Оганесович*  
*Ян Станислав Захарович*

Итак, благотворительный культурно-этнографический фонд «Луйс» утверждён. Луйс в переводе с армянского означает – свет. И мне представляется, что название подобрано очень удачно. Этот Фонд своего рода «свет

ըրիմահայոց ընկերության և Միմֆերոպոլի հայ Առաքելական Սուրբ Հակոբ եկեղեցու աճող պահանջմունքները բավարարելու նպատակով ստեղծվել է բարեգործական մշակութային-ազգագրական «Լույս» հիմնադրամը, որի 19 հայորդի հիմնադիրներն իրենց նպաստն են բերում ազգապահպանման սուրբ գործին:

Մեր պապերի օրհնանքը նրանց. «Աստված մեկը հազար անի», և հուսով ենք, որ ներքոհիշյալ նվիրյալների ցուցակն էլ ավելի կստվարանա:



**Пройдет немного времени и это здание станет основой благоденствия общины**

в конце тоннеля». Дополнительный источник финансирования, «Луйс» поможет в решении многих проблем во благо всего армянства Крыма.

На средства Фонда уже начато строительство трехэтажного здания во дворе Крымского армянского общества. По окончании строительства это помещение планируется сдать в аренду, а средства направить на благотворительные цели.

«Луйс» это самостоятельная независимая общественная организация, средствами которой будут распоряжаться учредители, добровольно вступившие в Фонд, чтобы поддержать и развивать национальную идентич-

ность крымских армян, их традиции, обычаи, религию. Однако двери Фонда открыты для всех желающих, и каждый может стать членом «Луйса» и внести свой вклад в это непростое дело. Ведь сказано. «Да не оскудеет рука дающего!». Мы не сомневаемся, что так и будет!


Если в конце тоннеля уже заметен свет (луйс) – это обнадеживает.

**А.Р. Каракулян**  
**Исполнительный директор КАО**

**Фото В. Вермишяна**



## Михаил Арамович ПЕТРОСЯН



Многие любители родного слова знают, что в Крыму, при Крымском армянском обществе, вот уже 6 лет существует Ассоциация Крымских армянских литераторов, куда входят талантливые поэты и писатели АРК. Один из членов Ассоциации — поэт Михаил Арамович Петросян. Родился он в селе Мухратах Мардакертского района Нагорно-Карабахской автономной области. Стихи на русском и армянском языках начал писать с четырнадцати лет. Публиковался в периодических изданиях («Бакинские армяне», «Коммунист» и «Авангард»).

С 1992 года Михаил Арамович Петросян живет в Симферополе и активно участвует в культурной жизни нашего народа. Он издал сборник стихов «Огни Карабаха», участвовал в первом выпуске альманаха «Родина в сердце».

1 января 2007 г. Михаилу Арамовичу исполнилось 65 лет. Крымское армянское общество поздравляет его с юбилеем и желает крепкого здоровья, творческих успехов, душевного тепла и семейного благополучия.

## Александр Ашотович АМАТУНИ

Когда меня, студентку факультета журналистики, впервые направили на практику в Крымское армянское общество, первое поручение, которое я получила, было собрать ответы земляков на вопрос «Что для вас значит быть армянином?» Познакомившись с разными мнениями. Пообщавшись со многими людьми, я составила обобщенный ответ на этот вопрос. Быть истинным армянином — это значит преданно любить свой народ, знать историю, развивать культуру армян и беречь традиции, всячески способствовать его единению. Именно такими качествами обладает активный член Крымского армянского общества (КАО), член Национального Совета КАО, член Церковного Совета религиозной общины г. Симферополя Александр Ашотович Амадуни.

Трудно найти армянина в Крыму, который не слышал бы об Александре Ашотовиче, не знал о его неутомимой работе на благо земляков. Его жизнь полна добрых дел. Меценат с большим стажем, он, например, очень много сделал для того, чтобы в Симферополе была построена церковь св. Акопа. В 2004 г., на праздничном концерте в честь 15-тилетия КАО, Александр Ашотович Амадуни был удостоен высшей награды — Золотого знака КАО.

2 января 2007 г. Александру Ашотовичу исполнилось 60 лет. Крымское армянское общество поздравляет Александра Ашотовича с юбилеем и желает крепкого здоровья, удачи, семейного благополучия, не иссякаемой энергии и взаимопонимания. Пусть Ваше доброе сердце согревает забота, ласка, тепло родных и друзей, а Ваш дом не покидают уют и спокойствие.



## Роберт Сергеевич АВETИСЯН

Исполнилось 70 лет со дня рождения одного из основателей КАО, члена Национального совета Роберта Сергеевича Аветисяна. Его заслуги перед Крымским армянским обществом были отмечены «Золотым знаком» КАО.

Родился 25 января 1937 г. в г. Степанакерте Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР.

В 1956 г. окончил среднюю школу № 3 г. Степанакерта и поступил на физико-математический факультет Крымского пединститута. С 1960 по 1968 гг. работал младшим научным сотрудником сейсмической станции в г. Севастополе. С 1962 по 1963 гг. — служба в Советской Армии. С 1963 по 1969 гг. — учитель физики и производства, директор вечерней средней школы № 19 г. Симферополя. С 1970 по 1981 гг. — помощник, заместитель генерального директора ПО «Фотон», г. Симферополь. С 1981 по 1994 гг. — коммерческий директор ПО «Муссон» г. Севастополя. С 1994 по 1995 гг. — первый зам. председателя Госкомитета по материально-техническому обеспечению Совета министров Автономной Республики Крым. С 1995 по 2001 гг. — генеральный директор «Крымнефтепродукта». Член Национального Совета Крымского армянского общества. Провел значительную работу по организации его постоянных комиссий и мероприятий, связанных с геноцидом армян в Османской Империи. Женат, двое детей: Анаида и Лариса. Жизненное кредо: любить семью и друзей. Хобби: спортивные игры.



Карина Хачатрян





## Александр Ашотович МИХАЛЬЯНЦ

«Мой дед - из города-крепости Шуши...»

4 февраля 2007 г. ценители искусства отметили 65-тилетие известного художника, скульптора и творца – Александра Михальянца.

С днем рождения Александра Ашотовича пришли поздравить его друзья и товарищи. Традиционные пожелания юбиляру здоровья, долголетия и творческих успехов были искренними. Пожелания творческих свершений реальны: ведь Александр Михальянц — член Союза художников СССР, ныне член Национального Союза художников Украины. За выдающиеся достижения в развитии искусства Крымское армянское общество наградило Александра Ашотовича памятной медалью им. О.К. Айвазовского.

Уходящий своими корнями в древний город-крепость Шуши, без малого 40 лет он живет и работает в Крыму в системе художественного Фонда, восхищая крымчан, а также ценителей искусства из ближнего зарубежья своими творениями. Его работы были представлены на международных выставках в Чехословакии, Польше, Югославии, России, Украине.

Александр Михальянц не просто художник, он мыслитель, философ. В его картинах, скульптурах, ювелирных изделиях мы «читаем между строк» глубокий смысл бытия. Глядя на его произведения, мы открываем мир в новых, ранее неведомых нам красках и образах.

Отслеживая ход творчества Александра Михальянца, мы видим, что, будучи признанным художником, он не останавливается на достигнутом, ищет все новые и новые изобразительные средства, чтоб открыть окружающим всю красоту и прелесть мира.



Крыло Сирены

Несравненный талант и труд художника был оценен по достоинству почетным дипломом за представленную коллекцию в Чехословакии, премией им. Александра Спендиарова Крымского республиканского фонда культуры и другими наградами.

Произведения Александра Михальянца выставлены в Симферопольском художественном музее, в Музее декоративно-прикладного искусства в Москве, в Киевском музее драгоценностей, во многих частных коллекциях.

В последнее время Александр Михальянц является одним из тех, кто в стиле национальных традиций с любовью к людям и Богу работает над возрождением культуры крымских армян. Подтверждением тому служит алтарная картина «Богородица с младенцем», написанная для ялтинской армянской церкви Святой Рипсиме. Недавно для того же храма художник изготовил великолепные резные дубовые двери.

Бесспорно, Александр Михальянц талантлив, восхитителен, успешен как творец. С сердечной, глубокой благодарностью редакция нашей газеты присоединяется к поздравлениям и надеется на многие плодотворные встречи с творчеством художника, открывающего нам удивительный мир «красочной крымской красоты», как сказал поэт. Мы гордимся достойным сыном армянского народа, т.к. то, что делает Александр Михальянц, и называется высоким искусством.

Анна Бархатова

студентка 5 курса факультета журналистики  
Таврического гуманитарно-экологического института



Пейзаж с луной





Наставления духовного отца всегда пригодятся. Молодежь у настоятеля церкви Св. Рипсиме г. Ялты отца Еремии Макияна

## ПУТЕШЕСТВИЯ по Крыму

Наконец-то свершилось... Комитет армянской молодежи стал осваивать Крым!

В течение двух месяцев делегация в составе семи членов правления КАМК посетила Керчь, Феодосию, Ялту, Севастополь и Белогорск.

Комитет армянской молодежи Крыма – серьезная, престижная, структурированная армянская молодежная организация в Симферополе, при Крымском армянском обществе. Единственная в своём роде. Является структурным подразделением Союза армянской молодежи Украины. Можно много говорить о достоинствах комитета, о четко налаженной работе, о продуманной организации национальных праздников, хорошей репутации. Этого мы достигли. Однако каждый раз жизнь ставит перед нами новые задачи, а мы делаем всё, чтобы их решить. На сегодняшний день большим достижением в работе КАМК считаем сотрудничество с регионами.

Основной нашей целью было знакомство, обмен опытом, поддержка, оказание методической помощи и, конечно же, - общение, общение и еще раз общение!

КАМК выражает благодарность Председателю Керченской армянской общины Гагику Гарниковичу Зурабяну и настоятелю Армянских апостольских церквей Ялты и Феодосии Отцу Иеремию Макияну.

Особую благодарность Комитет выражает Аветису Михайловичу Хачатуряну за спонсорскую поддержку нашей поездки.



г.Керчь. Чемпион по нардам Севак Хачатурян в каждом городе подтверждает свой титул.



"Мы за любой "квичиш", кроме голодовки..."



*Վերջապես իրականացավ... Հայ երիտասարդաց միությունն սկսեց յուրացնել Ղրիմը...*

*Երկու ամսվա ընթացքում ՂՅԵԿ-ի (ԿԱՍԶ) վարչության յոթ անդամներ այցելեցին Կերչ, Թեոդոսիա, Յալթա, Սևաստոպոլ և Բելոգորսկ քաղաքները*



г. Белогорск. Будем надеяться, что здесь тоже нас будет много!!!



Керчь. «Что мне снег, что мне зной, что мне дождик противной, когда мои друзья со мной...»



На братской могиле с. Глазовка, у памятника армянам, погибшим в Великой отечественной войне





2. Севастополь.  
Руководство городской  
армянской общины (снизу) и  
молодёжная организация (сверху)



Репортаж Карини Хачян  
Фото Ашота Габриеляна



Как много нас красивых, умных...



# 650 ЛЕТ

(1358-2008)

церкви  
Сурб Ншан  
монастыря Сурб Хач



**Основой армянского средневекового монастыря Сурб Хач, расположенного недалеко от г. Старый Крым, его центром духовного притяжения является церковь Сурб Ншан (Святого Знамения). Высеченная в камне надпись на барабане купола гласит: “Сей божественный храм славы, на земле рай дерева жизни; он подобие высокого неба и обиталище [св.] Троицы. От рождения во плоти Христа в 1358 году начав, воздвигнут во имя св. Знамения усердием служителя его Ованеса инок и родных братьев его и по духу сынов”.**

В настоящее время храм находится в аварийном состоянии. Крымское армянское общество обращается ко всем, кто готов поддержать работы по спасению храма с просьбой перечислить средства на счет с пометкой “на реставрацию церкви Сурб Ншан”

*Председатель  
Крымского Армянского Общества,  
доктор философских наук, профессор*

*О. А. Габриелян*

*Банковские реквизиты Крымского армянского общества*

*Код по ОКПО 20733101  
Р/С 26007301321021  
в филиале Крымского  
Центрального отделения  
Проминвестбанка Украины  
г. Симферополя МФО 32 44 30*



[www.kao.iatp.org.ua](http://www.kao.iatp.org.ua)

Точка зрения авторов публикуемых материалов может не совпадать с позицией редакции. Ответственность за точность сообщаемых фактов несут авторы. Рукописи не возвращаются и не рецензируются.

Главный редактор:  
Ваган Вермишян

Адрес: 95001, АРК, Симферополь, ул. Ленина, 9.  
Телефон: (0652) 27-89-15 Факс: (0652) 27-63-37.

Дизайнер: Нарине Акопян, Тигран Габриелян  
Фотограф: Саник Анатолий

Регистрационное свидетельство: КМ № 150 от 01.11.94г.

Заказ № Тираж 1000 экз.

Набор, верстка, тиражирование Крымского армянского общества.